# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 նոյեմբերի 2018թ. N 70-Ա

### ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ  է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 21-ի նիստի հետևյալ ***օ ր ա կ ա ր գ ը.***

1.1. Ջերմուկ համայնքի ղեկավարի հաղորդումը 2018 թվականի երրորդ եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Դրամական հատկացում կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.3. Ջերմուկ համայնքի 2018 թվականի բյուջեի վարչական մասին պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.4. Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 26-ի N 68-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.5. Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների 2019 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.6. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ենթակա բյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների աշխատակիցների 2019 թվականի թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.7. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների միանական դրույքաչափեր սահմանելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.8. 2019 թվականի համար ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի և համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.9. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2019 թվականի ծրագրային բյուջեի նախագծի մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.10.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին կից երիտասարդական խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.11. «ՅՈՒՔՈՄ» ՍՊ ընկերության կարիքների համար հողամասի սերվիտուտ սահմանելու համաձայնություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.12. Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող հողամասը առանց մրցույթի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, ամսական վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.13. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.14 Ջերմուկ համայնքի սեփականությունը համարվող Կեչուտ գյուղի 8-րդ փողոցի 10-րդ շենքի N 4 բնակարանը անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բաբայան | | |

| | | | |
|---|---|---|---|
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | բացակա | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | բացակա | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ........8....... դեմ-....0....... ձեռնպահ- ...0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 նոյեմբերի 21
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 նոյեմբերի 2018թ. N 71-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետին, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**.

1. Ընդունել ի գիտություն Ջերմուկ համայնքի ղեկավարի հաղորդումը 2018 թվականի երրորդ եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | բացակա | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | բացակա | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......8...... դեմ-...0........ ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 նոյեմբերի 21
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 նոյեմբերի 2018թ. N 72-Ա

### ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնվել Ջերմուկի համայնքապետարանի սեփականությունը հանդիսացող Ջերմուկ քաղաքի Ձախափնյակի 16/45 հասցեում (ներկա հասցեն՝ Ազատամարտիկների փողոց, 16-րդ շենք, N 45) գտնվող տարածքի՝ մարզասրահի, հիմնանորոգման համար նախագծանախահաշվային փաստաթղթեր ձեռք բերելու նպատակով «5134-նախագծա-հետազոտական ծախսեր» տնտեսագիտական հոդվածով 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ հատկացնելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշման առաջին կետում նշված նպատակի համար ֆինանսական հատկացումը կատարել համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցներից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | բացակա | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- .........8...... դեմ-.........0...... ձեռնպահ- ....0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 նոյեմբերի 21
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 նոյեմբերի 2018թ. N 73-Ն

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի 6-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ղեկավարի՝ համայնքի 2018 թվականի բյուջեի վարչական մասի հետևյալ փոփոխությունների մասին առաջարկությունը. համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից՝ բաժին 11, խումբ 01, դաս 02, ծրագիր 51, 210002- «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891» (պահուստային միջոցներ) տնտեսագիտական հոդվածից 18741.6 հազար ՀՀ դրամն ուղղել՝

1.1 Բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 51, 210002- «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի Ջերմուկ քաղաքի համար 4111(աշխատավարձ և նրան հավասարեցված վճարումներ) և 4212 (էներգետիկ ծառայություններ) տնտեսագիտական հոդվածներին՝ համապատասխանաբար 2179.0 հազար և 120.0 հազար ՀՀ դրամ՝ պակասացնելով 4112 (պարգևատրումներ, դրամական խրախուսումներ), 4233 (աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ), 4241 (մասնագիտական ծառայություններ ) տնտեսագիտական հոդվածները՝ համապատասխանաբար 444.0 հազար, 95.0 հազար և 100.0 հազար ՀՀ դրամ: — 639 + 2239

1.2 Բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 51, 210002- «Օրենսդիր, գործադիր մարմիններ, պետական կառավարում» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի Կարմրաշեն գյուղի համար 4111 (աշխատավարձ և նրան հավասարեցված վճարումներ) տնտեսագիտական հոդվածին՝ 497.6 հազար ՀՀ դրամ՝ պակասացնելով 4221 (ներքին գործուղումներ), 4233 (աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ), 4261 (գրասենյակային նյութեր և հագուստ), 4267 (կենցաղային և հանրային սննդի նյութեր) տնտեսագիտական հոդվածները՝ համապատասխանաբար 27.0 հազար, 26.0 հազար, 48.0 հազար և 60.0 հազար ՀՀ դրամ:

+497,6 — 161

1.3 Բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 51,210002- «Օրենսդիր, գործադիր մարմին պետական կառավարում» գործառնական նշանակության ծախսերի կատարմ նախահաշվի Հերհեր գյուղի համար 4111(աշխատավարձ և նրան հավասարեցվա վճարումներ) և 4212 (էներգետիկ ծառայություններ) տնտեսագիտական հոդվածներին՝ համապատասխանաբար 1015.0 հազար և 30.0 հազար ՀՀ դրամ:

+ 1045

1.4 Բաժին 01, խումբ 03, դաս 03, ծրագիր 55, 210002- «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) տնտեսագիտական հոդվածին՝ 1162.0 հազար ՀՀ դրամ:

1.5 Բաժին 04, խումբ 02, դաս 01, ծրագիր 55, 210002- «Գյուղատնտեսություն» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4115 (այլ վարձատրություններ) տնտեսագիտական հոդվածին՝ 879.1 հազար ՀՀ դրամ:

1.6 Բաժին 06, խումբ 03, դաս 01, ծրագիր 58, 210002-«Ջրամատակարարում» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4115 (այլ վարձատրություններ տնտեսագիտական հոդվածին) 1520.0 հազար ՀՀ դրամ:

1.7 Բաժին 05, խումբ 01, դաս 01, ծրագիր 51, 210002 - «Աղբահանում» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4639 (այլ ընթացիկ դրամաշնորհներ ոչ առևտրային կազմակերպություններին) տնտեսագիտական հոդվածին՝ 594.0 հազար ՀՀ դրամ:

1.8 Բաժին 08, խումբ 02, դաս 01, ծրագիր 51, 210002- «Գրադարաններ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4111 (աշխատավարձ և նրան հավասարեցված վճարումներ ) և 4212 (էներգետիկ ծառայություններ ) տնտեսագիտական հոդվածներին՝ համապատասխանաբար 1125.0 հազար և 208.0 հազար ՀՀ դրամ:

1.9 Բաժին 04, խումբ 05, դաս 05, ծրագիր 53,210002-«Խողովակաշարային և այլ տրանսպորտ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4111 (աշխատավարձ և նրան հավասարեցված վճարումներ) տնտեսագիտական հոդվածին՝ 2544.3 հազար ՀՀ դրամ՝ պակասացնելով 4212 (էներգետիկ ծառայություններ) տնտեսագիտական հոդվածը 566.0 հազար ՀՀ դրամով:

+ 2544,3 - 566,0.

1.10 Բաժին 09, խումբ 01, դաս 01, ծրագիր 51, 210002-«Նախադպրոցական կրթություն» գործառնական դասակարգման ծախսերի կատարման նախահաշվի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ ՀՈԱԿ-ներին) տնտեսագիտական հոդվածին ՝ 5716.0 հազար ՀՀ դրամ:

1.11 Բաժին 09, խումբ 05, դաս 01, ծրագիր 51,210002 - «Արտադպրոցական դաստիարակություն» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ ՀՈԱԿ-ներին) տնտեսագիտական հոդվածին՝ «Ջերմուկ համայնքի արվեստի N 1 դպրոց» և «Ջերմուկ համայնքի արվեստի N 2 դպրոց» ՀՈԱԿ-ներին՝ համապատասխանաբար 551.8 հազար և 561.8 հազար ՀՀ դրամ:

1.12 Բաժին 09, խումբ 05, դաս 01, ծրագիր 51 ,210002 - «Արտադպրոցական դաստիարակություն» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «Ջերմուկի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային հիմնարկի 4111 (աշխատավարձ և նրան հավասարեցված վճարումներ) և 4212 (էներգետիկ

ծառայություններ) տնտեսագիտական հոդվածներին՝ համապատասխանաբար 434.0 հազար և 20.0 հազար ՀՀ դրամ: 454,0

1.13 Բաժին 10, խումբ 07, դաս 01, ծրագիր 54,210002- «Սոցիալական հատուկ արտոնություններ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4729 (այլ նպաստներ բյուջեից) տնտեսագիտական հոդվածին՝ 950.0 հազար ՀՀ դրամ:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունները կատարվել են «4111 (աշխատավարձ և նրան հավասարեցված վճարումներ)» և «4115 (այլ վարձատրություններ)» տնտեսագիտական հոդվածներում, դրանք պայմանավորված են չնախատեսված աշխատանքների և ծառայությունների իրականացման համար քաղաքացիաիրավական պայմանագրերի կնքմամբ, արտադպրոցական դաստիարակություն ոլորտում երեխաների հաճախումների ավելացման հետ կապված ժամավճարների պլանավորմամբ, նախադպրոցական կրթություն ոլորտում դաստիարակի և դաստիարակի օգնականի փոխարինող հաստիքների համար քաղաքացիաիրավական պայմանագրերով վճարումների, համայնքի ճոպանուղու գլխավոր ճոպանի ընթացիկ նորոգման հետ կապված աշխատակազմի տեխնիկական սպասարկող անձնակազմին լրավճարների և հավելավճարների տրմամբ:

«Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» ոլորտում ավելացումը պայմանավորված է ամանորյա համաքաղաքային միջոցառման կազմակերպման և նվերների ձեռք բերման, «Աղբահանություն» ոլորտում «Ջերմուկի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող այլ ծառայությունների փաստացի ավել հավաքագրված գումարների, ինքնարժեքի հաշվարկման մեթոդով տրանսպորտային ծախսերի հետ վերադարձման, «Սոցիալական հատուկ արտոնություններ» ոլորտում՝ համայնքի բնակիչներին սոցիալական աջակցություն տրամադրելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | [signature] | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | բացակա | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | [signature] | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | [signature] | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | [signature] | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | [signature] | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | [signature] | | |

Հրպ. ա. 2010 7,6.
ա. 2010 7,6.

| | | | |
|---|---|---|---|
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......8...... դեմ-......0...... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 նոյեմբերի 21
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 նոյեմբերի 2018թ. N 74-Ա

### ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 68-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ  է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 26-ի «Ջերմուկի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային հիմնարկը, «Ջերմուկի երիտասարդական կենտրոն» և «Ջերմուկի համայնքի Կ. Ա. Ասրյանի անվան շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները լուծարելու և «Սպորտի, երիտասարդության, մշակույթի և տուրիստական-տեղեկատվական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» 68-Ա որոշման վերնագրում և 3-րդ կետում «Սպորտի, երիտասարդության, մշակույթի և տուրիստական-տեղեկատվական կենտրոն» բառերը փոխարինել «Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Ջավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | բացակա | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ........8..... դեմ-.....0....... ձեռնպահ- ...0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 նոյեմբերի 21
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 նոյեմբերի 2018թ. N 75-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 28-րդ կետի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Հաստատել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների 2019 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | բացակա | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | բացակա | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....8....... դեմ-.....0..... ձեռնպահ- ...0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 նոյեմբերի 21
Ջերմուկ

Հավելված 1

Ջերմուկ համայնքի ավագանու
2018թ. նոյեմբերի 21-ի N 75-Ա որոշման

## ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ

*Աշխատակազմ՝ 12*

***Առանձնացված ստորաբաժանումներ՝***

1.Սոցիալական աջակցության Ջերմուկի տարածքային բաժին -5
2. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ջերմուկի տարածքային բաժին-1

***Կառուցվածքային ստորաբաժանումներ՝***

1.Ֆինանսական բաժին -5
2.Ներքին աուդիտի բաժին-1

***Տեխնիկական սպասարկման անձնակազմ – 12***

***Ընդհամենը՝ թվաքանակ - 36***

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Է. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված 2
Ջերմուկ համայնքի ավագանու
2018 թվականի նոյեմբերի 21 -ի
N 76 - Ա որոշման

# ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորները | Դրույքի չափը (դրամ) | Ընդամենը աշխատավարձ (դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | **Քաղաքական պաշտոններ** | | | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 440,162 | 440,162 |
| | **Հայեցողական պաշտոններ** | | | |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 358,400 | 358,400 |
| 3 | Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 264,600 | 264,600 |
| 4 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 238,200 | 238,200 |
| 5 | Վարչական ղեկավար | 4 | 264,600 | 1,058,400 |
| | Ընդամենը | **7** | **1,125,800** | **1,919,600** |
| | ***Աշխատակազմ*** | | | |
| 6 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 352,200 | 352,200 |
| 7 | Գլխավոր մասնագետ-ճարտարապետ | 1 | 257,500 | 257,500 |
| 8 | Գլխավոր մասնագետ | 1 | 257,500 | 257,500 |
| 9 | Առաջատար մասնագետ | 5 | 187,300 | 936,500 |
| 10 | 2-րդ կարգի մասնագետ | 4 | 140,900 | 563,600 |
| | **Աշխատակազմի ֆինանսական բաժին** | | | |
| 11 | Բաժնի պետ | 1 | 323,000 | 323,000 |
| 12 | Առաջատար մասնագետ | 4 | 187,300 | 749,200 |
| | **Աշխատակազմի ներքին աուդիտի բաժին** | | | |
| 13 | Բաժնի պետ | 1 | 323,000 | 323,000 |
| | **Առանձնացված ստորաբաժանումներ** | | | |
| | ***Սոցիալական աջակցության Ջերմուկի փարածքային բաժին*** | | | |
| 14 | Բաժնի պետ | 1 | 264,623 | 264,623 |
| 15 | Գլխավոր մասնագետ | 1 | 189,885 | 189,885 |
| 16 | Առաջատար մասնագետ | 2 | 141,603 | 283,206 |
| 17 | 2-րդ կարգի մասնագետ | 1 | 106,548 | 106,548 |
| | **Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ջերմուկի տարածքային բաժին** | | | |
| 18 | Բաժնի պետ | 1 | 264,623 | 264,623 |

| Տեխնիկական սպասարկման անձնակազմ | | | | |
|---|---|---|---|---|
| 19 | Համակարգչային սարքեր սպասարկող | 1 | 187,300 | 187,300 |
| 20 | Տեղեկատվական համակարգի օպերատոր | 1 | 187,300 | 187,300 |
| 21 | Անասնաբույժ | 4 | 71,429 | 285,716 |
| 22 | Վարորդ | 1 | 130,000 | 130,000 |
| 23 | Հավաքարար | 1 | 130,000 | 130,000 |
| 24 | Հավաքարար | 2.5 | 100,000 | 250,000 |
| | **Ընդամենը** | **34.5** | **3,802,011** | **6,041,701** |
| | **ԸՆԴՀԱՆՈՒՐԸ՝** | **42.5** | **5,367,973** | **8,401,463** |

*ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ* Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 նոյեմբերի 2018թ. N 76-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետերին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ենթակա բյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների աշխատակիցների 2019 թվականի թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ Ջերմուկ համայնքի ենթակա բյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների 2019 թվականի հաստիքացուցակների մեջ չեն ներառվել «Ջերմուկ համայնքի արվեստի N 1 դպրոց» և «Ջերմուկ համայնքի Ճ. Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ների 0,5-ական միավորով «գործավար»-ի, «Ջերմուկ համայնքի քաղաքային գրադարան» ՀՀ-ի 1 (մեկ) միավոր «գրադարանավար»-ի և «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի 0,5 (կես) միավոր «էլեկտրիկ»-ի և 1 (մեկ) միավոր «հսկիչ»-ի հաստիքները. դրանք ենթակա են կրճատման:

3. Ջերմուկ համայնքի արվեստի դպրոցներում դասատուների, «Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ում մարզիչների, «Ջերմուկ համայնքի քաղաքային գրադարան» համայնքային հիմնարկում մատենագետի և գրադարանավարների, ««ՁԱՏԻԿ» մանկապարտեզ ՆՈՒՀ» և «Գնդեվազի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ներում դաստիարակների համար հաստատել հետևյալ դրույքաչափերը.

ա/ միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողներ՝

- մինչև 15 տարվա մասնագիտական ստաժի առկայությամբ - 110 000 դրամ
- 15 և ավելի տարվա մասնագիտական ստաժի առկայությամբ - 120 000 դրամ

բ/ բարձրագույն կրթություն ունեցողներ

- մինչև 15 տարվա մասնագիտական ստաժի առկայությամբ -115 000 դրամ

-15 և ավելի տարվա մասնագիտական ստաժի առկայությամբ-125 000 դրամ

3. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թ. հունվարի 26-ի N 29-Ն հրամանի 3-րդ և նշյալ հրամանով հաստատված N 1 հավելվածի 25-րդ կետերին համապատասխան, հաշվի առնելով, որ ամառային սեզոնի հետ կապված ավելանում է երիտասարդ կանանց զբաղվածությունը, որի հետևանքով կտրուկ ավելանում է նախադպրոցական տարիքի երեխաներին «Զատիկ» մանկապարտեզում ժամանակավորապես տեղավորելու դիմումների քանակը՝ իրավունք վերապահել մանկապարտեզի տնօրենին, համայնքի ղեկավարի որոշմամբ, ըստ անհրաժեշտության ավելացնելու խմբերի քանակը 1-ից 2-ով: Նման խմբերում աշխատողներին ընդունել պայմանագրային հիմունքներով՝ սահմանված կարգով կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագրեր:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | [signature] | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | բացակա | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | չի մասնակցել | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | [signature] | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | [signature] | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | [signature] | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | [signature] | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | բացակա | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | [signature] | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......7...... դեմ-...0....... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] [stamp] Վ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 նոյեմբերի 21
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկի համայնքի ավագանու
2018 թվականի նոյեմբերի 21 -ի
N 76-Ա որոշման

# ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2019 թվականի համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների, թվաքանակը, հաստիքացուցակը և աշխատավարձերի պաշտոնային դրույքաչափերը

## 1. «ՋԵՐՄՈՒԿԻՀԱՄԱՅՆՔԻ «ՋԱՏԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՆՈՒՀ» ՀՈԱԿ

*աշխատակիցների թվաքանակը* 25

| հ/հ | պաշտոնի անվանումը | հաստիքային միավորը | դրույքի չափը | գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | տնօրեն | 1 | 205000 | 205000 |
| 2 | գլխավոր հաշվապահ | 1 | 164000 | 164000 |
| 3 | մեթոդիստ ուսումնական գծով տնօրենի տեղակալ | 1 | 120000 | 120000 |
| 4 | դաստիարակ | 2.8 | 115000 | 322000 |
| 5 | դաստիարակ | 3.92 | 120000 | 470400 |
| 6 | երաժշտության դաստիարակ | 1.5 | 125000 | 187500 |
| 7 | ֆիզկուլտուրայի հրահանգիչ | 1 | 115000 | 115000 |
| 8 | պարուսույց | 1 | 115000 | 115000 |
| 9 | փոխարինող դաստիարակ | 1 | 120000 | 120000 |
| 10 | դաստիարակի օգնական | 6 | 100000 | 600000 |
| 11 | փոխարինող դայակ | 1 | 100000 | 100000 |
| 12 | գործավար | 0.25 | 100000 | 25000 |
| 13 | տնտեսվար | 0.5 | 100000 | 50000 |
| 14 | պահեստապետ | 0.5 | 100000 | 50000 |
| 15 | խոհարար | 2 | 100000 | 200000 |
| 16 | խոհարարի օգնական | 1 | 100000 | 100000 |
| 17 | լվացարար | 0.25 | 100000 | 25000 |
| 18 | օժանդակ բանվոր | 0.5 | 100000 | 50000 |
| 19 | փականակագործ-էլեկտրամոնտյոր | 0.5 | 100000 | 50000 |
| 20 | դերձակ | 0.25 | 100000 | 25000 |
| 21 | հավաքարար | 0.5 | 100000 | 50000 |
| 22 | դռնապահ | 1 | 100000 | 100000 |
| 23 | պահակ | 2 | 100000 | 200000 |
| 24 | բուժքույր | 1 | 100000 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 31.47 | | 3543900 |

## 2. «ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՎԵՍՏԻ N 1 ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ

*աշխատակիցների թվաքանակը* 18

| հ/հ | պաշտոնի անվանումը | հաստիքային Միավորը | դրույքի չափը | գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | տնօրեն | 1 | 170000 | 170000 |
| 2 | հաշվապահ | 0.5 | 136000 | 68000 |
| 3 | տնտեսվար | 1 | 100000 | 100000 |
| 4 | հավաքարար | 2 | 100000 | 200000 |
| 5 | երգչախմբի ղեկավար | 1 | 110000 | 110000 |
| 6 | դասատու | 1.25 | 110000 | 137500 |
| 7 | դասատու | 2.45 | 110000 | 269500 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8 | դասատու | 0.54 | 115000 | 62100 |
| 9 | դասատու | 0 | 115000 | 0 |
| 10 | դասատու | 1.31 | 120000 | 157200 |
| 11 | դասատու | 1.5 | 120000 | 180000 |
| 12 | դասատու | 0 | 125000 | 0 |
| 13 | դասատու | 0.77 | 125000 | 96250 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 13.32 | | 1550550 |

ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ

| հ/հ | պաշտոնի անվանումը | հաստիքային միավորը | դրույքի չափը | գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | դասատու | 0.52 | 110000 | 57200 |
| 2 | դասատու | 0.33 | 125000 | 41250 |
| 3 | դասատու | 1.09 | 125000 | 136250 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 1.94 | | 234700 |

*Ընդհանուրը* **1785250**

**3. «ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Շ. ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ**

*աշխատակիցների թվաքանակը* 24

| հ/հ | պաշտոնի անվանումը | հաստիքային միավորը | դրույքի չափը | գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | տնօրեն | 1 | 205000 | 205000 |
| 2 | հաշվապահ | 0.5 | 164000 | 82000 |
| 3 | տնտեսվար | 1.5 | 100000 | 150000 |
| 4 | հավաքարար | 1.5 | 100000 | 150000 |
| 5 | երգչախմբի ղեկավար | 1 | 110000 | 110000 |
| 6 | դասատու | 1.646 | 110000 | 181060 |
| 7 | դասատու | 5.45 | 110000 | 599500 |
| 8 | դասատու | 0.46 | 115000 | 52900 |
| 9 | դասատու | 0.136 | 115000 | 15640 |
| 10 | դասատու | 1.708 | 120000 | 204960 |
| 11 | դասատու | 6.09 | 120000 | 730800 |
| 12 | դասատու | 0.96 | 125000 | 120000 |
| 13 | դասատու | 0.68 | 125000 | 85000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 22.63 | | 2686860 |

ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ

| հ/հ | պաշտոնի անվանումը | հաստիքային միավորը | դրույքի չափը | գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | դասատու | 0 | 110000 | 0 |
| 2 | դասատու | 0.18 | 110000 | 19800 |
| 3 | դասատու | 0.25 | 120000 | 30000 |
| 4 | դասատու | 0.636 | 120000 | 76320 |
| 5 | դասատու | 0 | 125000 | 0 |
| 6 | դասատու | 0.477 | 125000 | 59625 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 1.543 | | 185745 |

*ընդհանուրը* **2872605**

## 4.ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՆԴԵՎԱԶԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ

*աշխատակիցների թվաքանակը 8*

| հ/հ | պաշտոնի անվանումը | հաստիքային միավորը | դրույքի չափը | գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | տնօրեն | 1 | 145000 | 145000 |
| 2 | գլխավոր հաշվապահ | 0.5 | 120000 | 60000 |
| 3 | մեթոդիստ ուսումնական գծով՝ տնօրենի տեղակալ | 0.25 | 115000 | 28750 |
| 4 | դաստիարակ | 1.12 | 115000 | 128800 |
| 5 | երաժշտության դաստիարակ | 0.25 | 115000 | 28750 |
| 6 | պարուսույց | 0.25 | 115000 | 28750 |
| 7 | դաստիարակի օգնական | 1 | 100000 | 100000 |
| 8 | տնտեսվար | 0.25 | 100000 | 25000 |
| 9 | խոհարար | 1 | 100000 | 100000 |
| 10 | խոհարարի օգնական | 0.5 | 100000 | 50000 |
| 11 | օժանդակ բանվոր | 0.25 | 100000 | 25000 |
| 12 | հավաքարար | 0.5 | 100000 | 50000 |
| 13 | գիշերային պահակ | 1 | 100000 | 100000 |
| 15 | բուժքույր | 0.5 | 100000 | 50000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 8.37 | | 920050 |

## 5. «ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊՈՐՏԻ, ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ

*աշխատակիցների թվաքանակը*

| հ/հ | պաշտոնի անվանումը | հաստիքային միավորը | դրույքի չափը | գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | տնօրեն | 1 | 145000 | 145000 |
| 2 | ակումբավար | 1 | 125000 | 125000 |
| 3 | ակումբավար | 3 | 100000 | 300000 |
| 4 | զբոսաշրջության գծով օպերատոր | 1 | 125000 | 125000 |
| 5 | մարզիչ | 1 | 135000 | 135000 |
| 6 | մարզիչ | 1 | 115000 | 115000 |
| 7 | բուժքույր | 0.5 | 100000 | 50000 |
| 8 | հավաքարար | 1 | 100000 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 9.5 | | 1095000 |

## 6.«ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՊԱՆՈՒԻՂԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ

*աշխատակիցների թվաքանակը 10*

| հ/հ | պաշտոնի անվանումը | հաստիքային միավորը | դրույքի չափը | գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | տնօրեն | 1 | 220000 | 220000 |
| 2 | հաշվապահ-գործավար | 1 | 164000 | 164000 |
| 3 | դիզելավար | 1 | 100000 | 100000 |
| 4 | հիդրավլիկայի մասնագետ | 1 | 100000 | 100000 |
| 5 | էլեկտրիկ | 1 | 100000 | 100000 |
| 6 | տոմսավաճառ | 1 | 136000 | 136000 |
| 7 | հսկիչ | 1 | 100000 | 100000 |
| 8 | օպերատոր | 2 | 100000 | 200000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9 | հավաքարար | 2 | 100000 | 200000 |
| 10 | պահակ | 3 | 100000 | 300000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 14 | | 1620000 |

7. «ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ

աշխատակիցների թվաքանակը 5

| հ/հ | պաշտոնի անվանումը | հաստիքային միավորը | դրույքի չափը | գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | տնօրեն | 1 | 145000 | 145000 |
| 2 | մատենագետ | 0.5 | 125000 | 62500 |
| 3 | գրադարանավար | 2 | 120000 | 240000 |
| 4 | օպերատոր | 1 | 115000 | 115000 |
| 5 | հավաքարար | 1.5 | 100000 | 150000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 6 | | 712500 |

8.«ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ

աշխատակիցների թվաքանակը 41

*Վարչական մաս*

| հ/հ | պաշտոնի անվանումը | հաստիքային միավորը | դրույքի չափը | գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | տնօրեն | 1 | 244000 | 244000 |
| 2 | հաշվապահ-գործավար | 1 | 175000 | 175000 |
| 3 | ճարտարագետ | 1 | 185000 | 185000 |
| 4 | օպերատոր | 1 | 145000 | 145000 |
| 6 | պահակ | 2 | 81000 | 162000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 6 | | 911000 |

*Համայնքի արտաքին ցանցի լուսավորվածության սպասարկում*

| հ/հ | պաշտոնի անվանումը | հաստիքային միավորը | դրույքի չափը | գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | էլեկտրիկ | 1 | 110000 | 110000 |
| 2 | վարորդ | 0.5 | 140000 | 70000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 1.5 | | 180000 |

*Համայնքի սանիտարական մաքրում*

| հ/հ | պաշտոնի անվանումը | հաստիքային միավորը | դրույքի չափը | գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | բրիգադավար | 1 | 155000 | 155000 |
| 2 | բանվոր | 2 | 110000 | 220000 |
| 3 | փականակագործ | 1 | 81000 | 81000 |
| 4 | մեխանիկ | 1 | 150000 | 150000 |
| 5 | հավաքարար | 1 | 113500 | 113500 |
| 6 | հավաքարար | 12 | 100000 | 1200000 |
| 7 | վարորդ | 2 | 140000 | 280000 |
| 8 | տրակտորիստ | 3 | 140000 | 420000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 23 | | 2619500 |

*Աղբահանություն և բարեկարգում*

| հ/հ | պաշտոնի անվանումը | հաստիքային միավորը | դրույքի չափը | գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | բանվոր | 2 | 140000 | 280000 |
| 2 | վարորդ | 2 | 175000 | 350000 |
| 3 | տրակտորիստ | 0.75 | 140000 | 105000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 4.75 | | 735000 |

*սեզոնային հաստիքներ 01.04.2018-01.11.2018թթ. կանաչապատում*

| հ/հ | պաշտոնի անվանումը | հաստիքային միավորը | դրույքի չափը | գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | բանվոր | 2 | 110000 | 220000 |
| 2 | հավաքարար | 2 | 100000 | 200000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | **4** | | **420000** |

*սեզոնային հաստիքներ 01.01.2018-01.04.2018թթ. և 01.11.2018-30.12.2018թթ համար*

| հ/հ | պաշտոնի անվանումը | հաստիքային միավորը | դրույքի չափը | գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | տրակտորիստ | 1 | 140000 | 140000 |
| 2 | ավտոգրեյդերավար | 1 | 200000 | 200000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | **2** | | **340000** |

| | | |
|---|---|---|
| ԸՆԴՀԱՆՈՒՐԸ | **41.25** | **5205500** |

*ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ.ՔԱՂԵՎՈՍՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 նոյեմբերի 2018թ. N 77-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետին և «Տեղական տուրքերի ու վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում օրենքով սահմանված տեղական տուրքերի 2019 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում օրենքով սահմանված տեղական վճարների 2019 թվականի դրույքաչափերը և արտոնությունները՝ համաձայն հավելված 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | բացակա | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....8..... դեմ-.....0..... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 նոյեմբերի 21
Ջերմուկ

Հավելված 2

Ջերմուկ համայնքի ավագանու
2018 թվականի նոյեմբերի 21 -ի
N 77-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

| Տեղական վճարի տեսակը | Դրույքաչափը (ՀՀ դրամ) | |
|---|---|---|
| | Ջերմուկ քաղաք | Համայնքի գյուղական բնակավայրեր |
| համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար | 20 000 | 10 000 |
| ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար | 20 000 | 10 000 |

| | | |
|---|---|---|
| ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար | 20 000 | 10 000 |
| համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար | 50 000 | 20 000 |
| համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար | 20 000 | 10 000 |
| համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար | 1000 | 1000 |
| ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և(կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական | 100 | 50 |
| համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար | ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000<br><br>ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10 000 | ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1200<br><br>ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 4 000 |

| | | |
|---|---|---|
| համայնքի ղեկավարի կողմից շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և տեղափոխման թույլտվության համար | ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 600<br><br>ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 2 000 | ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 240<br><br>ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 800 |
| համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվելու համար՝ մեկ երեխայի հաշվով* | 7000 | 5000 |
| համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվելու համար** | 3000 | - |

* մանկապարտեզի ծառայությունից օգտվելու համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 50 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել միևնույն ընտանիքից մանկապարտեզ հաճախող երկրորդ և հաջորդ երեխաների, ինչպես նաև միակողմանի ծնողազուրկ երեխաների, 100 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել արցախյան պատերազմում և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության համար զոհվածների, ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ու երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար.

** արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայությունից օգտվելու համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 50 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել ընտանեկան նպաստ ստացող ընտանիքից արվեստի դպրոցներ հաճախող երկրորդ և հաջորդ երեխաների, ինչպես նաև միակողմանի ծնողազուրկ երեխաների, 100 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել արցախյան պատերազմում և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության համար զոհվածների, ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ու երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար.

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| | Անասնաբուժական ծառայության տեսակը | դրույքաչափը /դրամ/ |
|---|---|---|
| 1 | Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն | **750** |
| | Ծննդօգնություն | |
| 2 | 1. թեթև միջամտություն | **1000** |
| | 2. ծանր միջամտություն | **10 000** |
| 3 | Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների) | **Մանր կենդանի 150**<br>**Խոշոր կենդանի 250** |
| 4 | Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար | **500** |
| 5 | Ախտահանություն | **1 քառ. մետր 250** |
| 6 | Միջատազերծում (դեզինսեկցիա) | **1 քառ. մետր 150** |
| 7 | Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա) | **1 քառ. մետր 200** |
| 8 | Արհեստական սերմնավորում | **6000** |
| 10 | Կենդանու հերձում | **մանր կենդանի 1000**<br>**խոշոր կենդանի 3000** |

| | | |
|---|---|---|
| 11 | Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից | Յուրաքանչյուր այցելությունը **1500** |
| 12 | Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից | մանր կենդանի **1000**<br>խոշոր կենդանի **2000** |
| 13 | Կենդանիների հետսպանդային զննում (մինչև 2018թ. հուլիս ամիսը) | մանր կենդանի **1000**<br>խոշոր կենդանի **2000** |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 նոյեմբերի 2018թ. N 78-Ն

## 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Սահմանել 2019 թվականի համար ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի և համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների հետևյալ դրույքաչափերը՝

ա) «Ջերմուկ համայնքի ճոպանուղի» համայնքային հիմնարկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարի չափը՝ 1500 դրամ՝ մեկ ուղևորի մեկ շրջապտույտի համար,

բ) հասցեների տրամադրման (վերահասցեավորման) համար՝ 20 000 ՀՀ դրամ Ջերմուկ քաղաքում, 10 000 ՀՀ դրամ՝ համայնքի գյուղական բնակավայրերերում,

գ) Ջերմուկ համայնքի գյուղական բնակավայրերում հանդիսությունների սրահները օգտագործման տրամադրելու համար՝ 15 000 ՀՀ դրամ՝ ուրախառիթ, անհատույց՝ սգո արարողությունների դեպքում. սրահները վարձակալողի վրա է դրվում իր արարողության համար օգտագործված էլեկտրաէներգիայի և գազի վճարների մուծման, ինչպես նաև գույքի, սպասքի և սրահի այլ իրերի հնարավոր վնասների փոխհատուցման պարտավորությունը,

դ) ինժեներական ենթակառուցվածքների մոնտաժման կամ ապամոնտաժման աշխատանքների համաձայնության տրամադրման համար՝ համաձայն հավելված 1-ի,

ե) համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի գործառական նշանակության փոփոխության ծառայության համար՝ համաձայն հավելված 2-ի,

զ) համայնքի վարչական տարածքում օրինականացված ինքնակամ կառույցների, ինչպես նաև՝ բնակելի և ոչ բնակելի տարածքների օտարման կամ օգտագործման տրամադրման համար՝ համաձայն հավելված 3-ի,

է) համայնքային սեփականության մեքենա-մեխանիզմները օգտագործման տրամադրելու համար՝ համաձայն հավելված 4-ի:

2. Իրավունք վերապահել համայնքի ղեկավարին սույն որոշման 1-ին կետի «գ»-ից «զ» ենթակետերով սահմանված վճարների համար կիրառել դրույքաչափերի նվազեցման արտոնություն 50-ից 100 տոկոսի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաքայան Կավկազ Ջավենի | բացակա | | |
| Բաքաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | բացակա | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | բացակա | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...8...... դեմ-...0...... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 նոյեմբերի 21
Ջերմուկ

*Հավելված 1*
*Ջերմուկ համայնքի ավագանու*
*2018 թվականի նոյեմբերի 21 -ի*
*N 78-Ն որոշման*

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՄՈՆՏԱԺՄԱՆ ԿԱՄ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

| Հ/Հ | Ծառայության տեսակը | Դրույքաչափը (դրամ) | |
|---|---|---|---|
| | | Քաղաքային բնակավայր | Գյուղական բնակավայր՝ 0.4 գործակից |
| 1. | Մինչև 100 մետրի դեպքում | 2 000 ( երկու հազար ) | 800 (ութ հարյուր ) |
| 2. | 101-ից մինչև 500 մետրի դեպքում | 5 000 ( հինգ հազար ) | 2 000 ( երկու հազար ) |
| 3. | 501 և ավելի մետրի դեպքում | 10 000 ( տաս հազար ) | 4000 (չորս հազար ) |

*ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՂԱՐ՝*

*Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ*

Հավելված 2
Ջերմուկ համայնքի ավագանու
2018 թվականի նոյեմբերի 21 -ի
N 78-Ն որոշման

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

| Հ/Հ | Վճարի տեսակը | Դրույքաչափը (դրամ) | |
|---|---|---|---|
| | | Քաղաքային բնակավայր | Գյուղական բնակավայր՝ 0.4 գործակից |
| 1. | **Շինությունների համար՝** | | |
| | 1) Ֆիզիկական անձանց համար՝ 5 000 (հինգ հազար) դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար՝ | 250 ( երկու հարյուր հիսուն ) | 100 (հարյուր ) |
| | 2) Իրավաբանական անձանց համար՝ 50 000 (հիսուն հազար) դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար | 250 (երկու հարյուր հիսուն) | 100 (հարյուր ) |
| 2. | **Հողամասերի համար՝** | | |
| | 1) Ֆիզիկական անձանց համար՝ 5 000 (հինգ հազար) դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար | 150 (հարյուր հիսուն ) | 60 (վաթսուն) |
| | 2) Իրավաբանական անձանց համար՝ 50 000 (հիսուն հազար) դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար | 150 (հարյուր հիսուն) | 60 (վաթսուն) |

*ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՂԱՐ*

*Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ*

Հավելված 3
Ջերմուկ համայնքի ավագանու
2018 թվականի նոյեմբերի 21 -ի
N 78-Ն որոշման

# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

| Հ/Հ | Վճարի տեսակը | Դրույքաչափը (դրամ) | |
|---|---|---|---|
| | | Քաղաքային բնակավայր՝ | Գյուղական բնակավայր՝ 0.4 գործակից |
| 1. | Օրինականացված ինքնակամ կառույցների օտարման կամ օգտագործման տրամադրման համար | 50 000 ( հիսուն հազար ) | 20000 (քսան հազար) |
| 2. | Բնակելի կամ ոչ բնակելի տարածքների օտարման և օգտագործման տրամադրման համար | 65 000 (վաթսունհինգ հազար ) | 26 000 (քսանվեց հազար) |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված 4
Ջերմուկ համայնքի ավագանու
2018 թվականի նոյեմբերի 21 -ի
N 78-Ն որոշման

# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

| Ծառայության անվանումը | Չափման միավորը | Վճարի չափը՝ ներառյալ վառելիքը (ՀՀ դրամ) | Վճարի չափը՝ առանց վառելիքի (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| *ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉ 1-ի՝ «Ջերմուկ համայնքի աղբահանություն,՝ սանիտարական մաքրում, կոմունալ ծառայությունների բարելավում» շրջանակներում* | | | |
| Կոշտ աղբի տեղափոխում | 1 տոննա | 1500 | 1000 |
| բեռնափոխադրում | 1 կմ | 770 | 550 |
| GSB էքսկավատորի շահագործում | 1 ժամ | 15 000 | 10 000 |
| *ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉ 2-ի՝ « Ջերմուկ համայնքի ներհամայնքային ճանապարհների սպասարկում» շրջանակներում* | | | |
| Ճանապարհների հարթեցում | 1 ժամ | 13000 | 9000 |
| Գրեյդերի շահագործում | 1 ժամ | 10000 | 7000 |
| GSB էքսկավատորի շահագործում | 1 ժամ | 15000 | 10000 |
| *ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉ 3-ի՝ « Ջերմուկ համայնքում այգեգործության խթանում» շրջանակներում* | | | |
| Խոտի հունձ | 1 հա | 13000 | 9000 |
| Հողի վարում | 1 հա | 13000 | 9000 |
| Խոտի հավաքում | 1 հա | 11000 | 7000 |
| բեռնափոխադրում | 1 կմ | 770 | 550 |
| Խոտի հակավորում | 1 հակ | 50 | 50 |
| Այգիների սրսկում | 1 հա | 12000 | 9000 |

*ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ*

*Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 նոյեմբերի 2018թ. N 79-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետին և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին համաձայն, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածներին համապատասխան ավագանին **ո ր ո շ ո ւ մ է՝**

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2019 թվականի ծրագրային բյուջեի նախագիծը՝ համաձայն հավելվածի:

1.1. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

եկամուտներ - 497794.0 հազար ՀՀ դրամ

ծախսեր - 497794.0 հազար ՀՀ դրամ

Ընդամենը՝ վարչական բյուջե -497794.0 հազար ՀՀ դրամ

*1.2. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ*

եկամուտներ - 223962.4 հազար ՀՀ դրամ

ծախսեր - 223962.4 հազար ՀՀ դրամ

Ընդամենը՝ ֆոնդային բյուջե- 223962.4 հազար ՀՀ դրամ

*ԸՆԴԱՄԵՆԸ՝ Ջերմուկ համայնքի 2019 թվականի բյուջեն ՝ 721756.4* հազար ՀՀ դրամ:

2. Ջերմուկ համայնքի 2019 թվականի ծրագրային բյուջեի նախագիծը ներկայացնել հանրային քննարկման. առցանց քննարկման նպատակով այն տեղադրել համայնքի համացանցային jermuk.am կայքում, իսկ բնակչության լայն զանգվածների և շահագրգիռ մարմինների հետ հանրային քննարկման օր նշանակել 2018 թ. դեկտեմբերի 10-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կալենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | բացակա | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համլետ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | բացակա | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- 8 դեմ- 0 ձեռնպահ- 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 նոյեմբերի 21
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկ համայնքի ավագանու
2018 թվականի նոյեմբերի 21 -ի N 79-Ա որոշման

# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ
# 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾ

1. Յամայնքի անվանումը *Ջերմուկի համայնքապետարան*
2. Փոստային հասցեն *ք. Ջերմուկ Մյասնիկյան 8*
3. Յամայնքի տեղաբաշխման մարզը և համայնքի կոդը *51*
   ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման______*210002*___ ______________
4. Յամայնքին սպասարկող Գանձապետական ստորաբաժանման անվանումը__________
5. Յամայնքի՝ Գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը___*90036*__ ____
6. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ *(համայնքի բյուջե՝ 2)*
7. Չափի միավորը՝ *հազար դրամ*

« 21 » նոյեմբեր 2018թ.

Կ.Տ.

ՅԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________________ Վ.Է.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(Ա.Ա.Յ.)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 նոյեմբերի 2018թ. N 80-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՆԴԱՄ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին կից երիտասարդական խորհրդի կանոնադրության 10-րդ կետի պահանջը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին կից երիտասարդական խորհրդի կազմում Ջերմուկ համայնքի կողմից, որպես խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրել Լուսինե Վիրաբի Վիրաբյանի թեկնածությունը:

2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | բացակա | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | բացակա | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- .......7..... դեմ-.......1..... ձեռնպահ- ...0.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 նոյեմբերի 21
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 նոյեմբերի 2018թ. N 81-Ա

«ՅՈՒՔՈՄ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՐՎԻՏՈՒՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետին, 5-րդ կետի 2-րդ պարբերությանը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ո ւ մ  է՝**

1.Համաձայնվել «ՅՈՒՔՈՄ» ՍՊ ընկերության կարիքների համար (մալուխի անցկացում) 0,23817 հա հողամասի մշտական սերվիտուտ սահմանելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի օգտագործման համար սահմանել վճար. սերվիտուտի պետական գրանցման պահից յուրաքանչյուր ամսվա համար 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաքայան Կավկազ Զավենի | [signature] | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | [signature] | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | [signature] | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | [signature] | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | [signature] | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համլիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | բացակա | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- .......8..... դեմ-.....0....... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 նոյեմբերի 21
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 նոյեմբերի 2018թ. N 82-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՄՍԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 46-րդ հոդվածին,. Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ը» ենթակետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Համաձայնվել Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող Ջերմուկ քաղաքի Շլաքահանքի փողոց N 5 հասցեում գտնվող, 1,29827 հա մակերեսով (նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ընդերքի օգտագործման համար տրամադրված) հողամասը առանց մրցույթի վարձակալության իրավունքով ընդերքօգտագործման իրավունք ունեցող «Ջերմուկի Կարիտաս» ՍՊ ընկերությանը օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով հողամասի՝ վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ Չիրաքի հրաքխային խարամների հանքավայրի բաց եղանակով շահագործում, ամսական վարձավճարի չափը՝ 30 000 դրամ, վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ մինչև 25.02.2064 թ.:

2. Հայաստանի Հանրապետության Ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան իրավունք վերապահել Ջերմուկի համայնքի ղեկավարին «Ջերմուկի Կարիտաս» ՍՊ ընկերության հետ կնքելու հողօգտագործման պայմանագիր:

3. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 31-ի «Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող Շլաքահանքի փողոցի N 5 հասցեում գտնվող հողամասը մրցույթով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, ամսեկան վարձավճարի մեկնարկային գինը և պայմանները հաստատելու մասին» N 39-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կակկազ Ջավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | բացակա | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | բացակա | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......8...... դեմ-.....0........ ձեռնպահ- 0....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 նոյեմբերի 21
Ջերմուկ

Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 նոյեմբերի 2018թ. N 83-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 2000 քմ մակերեսով հողամասը (հողատեսքը՝ այլ հողատեսք, կադաստրային ծածկագիրը՝ 10-002-0106-0005) ըստ Ջերմուկ քաղաքի գլխավոր հատակագծի աճուրդով օտարելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով հողամասի օտարման նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, մեկնարկային գինը՝ 445 000 (չորս հարյուր քառասունհինգ հազար) դրամ:

2. Համաձայնվել Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի N 14/17 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակությամբ 307,3 քմ մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) ըստ Ջերմուկ քաղաքի գլխավոր հատակագծի աճուրդով օտարելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով հողամասի օտարման նպատակը՝ բնակելի կառուցապատման համար, կառուցապատման ժամկետը՝ 3 (երեք) տարի, մեկնարկային գինը՝ 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | բացակա | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | բացակա | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......8...... դեմ-......0...... ձեռնպահ- ...0.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀԱԿՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 նոյեմբերի 21
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 նոյեմբերի 2018թ. N 84-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԿԵՉՈՒՏ ԳՅՈՒՂԻ 8-ՐԴ ՓՈՂՈՑԻ 10-ՐԴ ՇԵՆՔԻ N 4 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ  է՝**

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող (հիմք՝ սեփականության իրավունքի N 19102018-10-0004 վկայական) Կեչուտ գյուղի 8-րդ փողոցի 10-րդ շենքի N 4 բնակարանը, մակերեսը՝ 24,66 քմ, համայնքի Կեչուտ գյուղի բնակիչ, այդ բնակարանը խորհրդային տարիներից ի վեր օգտագործող և տիրապետող Վասպուրակ Արմենի Ստեփանյանին անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Ջավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | բացակա | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....8.... դեմ-....0.... ձեռնպահ- ...0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 նոյեմբերի 21
Ջերմուկ